«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվետու տարվա գործունեությունը գնահատելով՝ փաստենք, որ, բանկը որդեգրած ռազմավարության հետևողական իրականացման, կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության համակարգի բարձր մակարդակի և ռիսկերի կառավարման օպտիմալ ռազմավարության ընտրության շնորհիվ կարողացավ դիմակայել զարգացման մարտահրավերներին, ապահովվեց գործունեության հիմնական ցուցանիշների աճ և կարևոր որակական տեղաշարժեր:

Կարևորվում է բանկի՝ որպես ունիվերսալ կառույցի զարգացման ռազմավարության շարունակականությունը, որը կպահպանվի նաև պլանավորվող ժամանակահատվածում, ինչը թույլ է տալիս առավել ցայտուն բացահայտել բանկի առավելությունները ՀՀ բանկային շուկայում՝ մատուցելով ծառայության ամբողջական փաթեթ, լիարժեք բավարարելով հաճախորդների պահանջարկը բանկային ծառայությունների նկատմամբ:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև «Moody's Investors Service» ընկերության կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին ռեյտինգների շնորհման, ինչպես նաև հաշվետու տարում ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականներից է շահույթի մոտ 2.1 անգամ աճը, որը թույլ է տալիս լուծել բանկի կապիտալիզացիայի խնդիրները:

Հաշվետու տարում ապահովվեց կապիտալի 1.6 մլրդ դրամով կամ 17.0%-ով աճ՝ ձևավորված շահույթի և վերագնահատման պահուստների աճի հաշվին՝ կազմելով մոտ 11.1 մլրդ դրամ:

2013թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվները աճել են 10.3 մլրդ դրամով կամ 16.1%-ով՝ կազմելով 74.2 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերը աճել են 7.3 մլրդ դրամով կամ 21.9%-ով՝ կազմելով 40.7 մլրդ դրամ, իսկ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները՝ 2.2 մլրդ դրամով կամ 45.8%-ով՝ կազմելով 7.1 մլրդ դրամ:

Բանկի պարտավորությունները, որոնք ձևավորվել են ներքին և արտաքին շուկաներից ներգրավված ժամկետային միջոցների և ցպահանջ միջոցների հաշվին, հաշվետու տարում աճել են 15.9%-ով կազմելով՝ 63.1 մլրդ. դրամ: Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 8.2 մլրդ դրամով կամ 22.5%-ով՝ կազմելով 44.4 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

Հաշվետու տարում ընդլայնվեցին նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համագործակցության շրջանակները,

գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում:

Նոր ծառայությունների ներդրման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների բազմազանման, տեխնոլոգիապես կատարելագործման, նոր ոլորտների և շուկաների յուրացման արդյունքում, հաշվետու տարում ծառայությունների մատուցումից ստացված միջնորդավճարները աճել են 29.9%-ով:

Բանկի արդյունավետ զարգացման, հաճախորդների համար վստահելի գործընկերոջ համբավի գերակայության կարևոր ցուցանիշ պետք է համարել տարվա ընթացքում բանկի հաճախորդների թվաքանակի աճը 13.9%-ով կամ 15,126 հաճախորդով:

Հաշվետու տարվա բանկի արդյունավետ տարածքային քաղաքականության մասին են վկայում նախորդ տարում գործարկված մասնաճյուղերի կայուն և դինամիկ զարգացումը, ինչպես նաև տարվա ընթացքում գործարկված մասնաճյուղի գործունեությունը: 2013թ. իրականացվեցին մի շարք մասնաճյուղերի վերակառուցում և վերանորոգում, տեխնիկական վերազինում՝ մոտեցնելով դրանք միջազգային չափանիշներին:

Բանկի զարգացման արձանագրված հաջողությունները մեծապես պայմանավորված են արդյունավետ կադրային քաղաքականությամբ, որը զուգակցում է կադրերի վերապատրաստումը գործուն խրախուսման համակարգի ներդրման հետ:

ՀՀ ֆինանսաբանկային հատվածում, 2013թ. նույնպես բնորոշվեց որպես համակարգի կանոնակարգվածության, կառավարելիության, թափանցիկության ավելացմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացման տարի:

Տարեցտարի բանկերի միջև զգալիորեն ավելի ու ավելի սրվող մրցակցությամբ պայմանավորված՝ հաշվետու տարում տեղաբաշխման տոկոսադրույքները և բանկային ծառայությունների սակագները հիմնականում նվազեցին, իսկ ներգրավման տոկոսադրույքները աճեցին, ինչի արդյունքում նվազեց բանկի տոկոսային մարժան և որոշակի չափով նվազեց բանկի կողմից ակնկալվող եկամուտները: Միևնույն ժամանակ սրվող մրցակցությունը նպաստում է համակարգի ընդհանուր առաջընթացին՝ պայմանավորված մրցակցությանը դիմանալու նպատակով բանկերի կողմից ձեռնարկվող միջոցառումներով: ՀՀ բանկային շուկայում դիրքերը պահպանելու և առաջընթաց զարգացում ապահովելու նպատակով՝ բանկը.

- մեծ ուշադրություն է դարձնում մատուցվող ծառայությունների ոչ միայն քանակական բազմազանմանը՝ նոր վարկային և ավանդային ծառայությունների մշակման և ներդրման առումով, այլ նաև որակի բարձրացմանը, ինչին և նպատակաուղղվում է կապիտալ ներդրումների որոշակի մասը,
- իրականացնում է ակտիվ գովազդային քաղաքականություն բանկի կողմից մատուցվող նոր ծառայությունները և նոր սակագները հասարակության լայն շերտերին իրազեկելու համար,

- արձագանքելով ներքին շուկայում տեղի ունեցող զարգացումներին՝ բանկը վարում է ճկուն սակագնային և տոկոսադրույքային քաղաքականություն:

Ռիսկերի բացահայտման և կառավարման գործուն համակարգի կատարելագործմանն ուղղված միջոցառումները մշտապես գտնվում են բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Բանկի ռիսկերի կառավարման գոյություն ունեցող համակարգը, որը ներառում է ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման» քաղաքականությունը՝ ըստ տարբեր ռիսկատեսակների կից կարգերով մշտապես զարգանում ու կատարելագործվում է, որը առաջիկայում նույնպես կզարգանա, կկատարելագործվի և կունենա նոր որակական մակարդակներ:

Նպատակ ունենալով անդրադառնալ բանկի այն արժանիքներին և միջոցներին (ուժեղ կողմերին), որոնց արժեքը ՖՀՄՍ-ների համաձայն չի արտացոլվում հաշվապահական հաշվեկշռում, հարցը դիտարկենք մի քանի տեսանկյուններից.

- Կառավարում
- Բանկային գործունեության արդյունքներ
- Կադրեր

Բանկի գործունեության ուժեղ կողմերից է բանկում արդեն իսկ գործող և ավելի ու ավելի ամրապնդվող ու զարգացող կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա որդեգրված կառավարման մեխանիզմը, որը հստակ կանոնակարգում և սահմանում է կառավարման յուրաքանչյուր օղակի գործելակերպը՝ թե՛ որոշումների ընդունման, թե՛ դրանց կատարման և վերահսկողության առումով: Նշվածն իր արտացոլումն է գտել բանկի նախորդ ժամանակաշրջանի գործունեության արդյունքներում, քանզի բանկում կիրառվող պլանավորման արդյունավետ համակարգի շնորհիվ հնարավոր է դարձել հստակ նախանշել առկա հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները, աղբյուրները և այլն՝ ապահովելով անհրաժեշտ արդյունքները: Կառավարման ուժեղ կողմերին է վերաբերում բանկի տարածքային ստորաբաժանումների աշխատանքների գնահատման ռեյտինգավորման համակարգերի կիրառումը: Դրված խնդիրներին և դրանց փոփոխությանը բանկի ճկուն արձագանքելու ունակությունը նույնպես վերաբերում է կառավարման ուժեղ կողմերին:

Բանկը ստացավ ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր, որը նույնպես վերաբերում է կառավարման ուժեղ կողմերին:

Բանկի գործունեության տեսակետից որպես ուժեղ կողմ կարելի է համարել բանկի ունիվերսալ կառույց լինելու փաստը, որը՝ հնարավորություն է տալիս երկրի ֆինանսատնտեսական սահմանափակ տարողունակության պայմաններում ապահովել դինամիկ ծավալային զարգացում՝ հաճախորդներին մատուցելով բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ: Նշվածի արտացոլումն է հաշվետու ժամանակահատվածում զարգացման առանցքային ծավալային ցուցանիշների աճը:

Որպես ուժեղ կողմ դիտվում է նաև տարածքային արդյունավետ քաղաքականության իրականացումը, հաշվի առնելով լայն մասնաճյուղային ցանցի հնարավորությունները: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ վերջին մի քանի տարիների ընթացքում ձևավորված և կայուն զարգացում ապրող հարաբերությունները կարելի է համարել բանկի ուժեղ կողմերից մեկը:

Կադրային քաղաքականության տեսանկյունից բանկի ուժեղ կողմ կարելի է համարել երիտասարդ հեռանկարային կադրերի ներգրավումը, գործունեության խրախուսման համակարգերի կիրառումը, կադրերի պարբերական վերապատրաստումը:

Խորհրդի նախագահի տեղակալ Ա. Մելիքյան

Խորհրդի անդամ Ս. Ղարիբյան